

ՄՈՒՍԱԿԱՆ ԹԵՐԹԻ ՄԵՆ ՄԱՍՆԱԿՈՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԸ ՀԵՏՂ ԵՐԹՈՎ ՄԸ ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի, 10 Մարտին «Ուաթան» հաղորդեց, որ Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ Մուալլեմ ընդունեց Կարմիր Մահիկ Միջազգային Կազմակերպության Սուրիոյ Յանձնախումբի նախագահ Փիլըրը



Մաուրըրը եւ անոր ընկերակցող պատուիրակուհիները: Հանդիպումի ընթացքին կողմերը խորհրդակցեցան Կարմիր Մահիկ Միջազգային Կազմակերպության եւ սուրիական կառավարության գործակցութեան արդիւնաւետութեան շուրջ, կարելի էր համարելով կողմերու աշխատանքներուն համակարգումը, որպէսզի Կարմիր Մահիկին կողմէ տրամադրուած օժանդակութիւնները հասնին պատերազմէն տուժած ընտանիքներուն: Մուալլեմ անդրադարձաւ տարիներու ընթացքին Սուրիոյ պետութեան եւ Կարմիր Մահիկին միջեւ ամրագրուած վստահութեան, յայտնելով, որ Սուրիա պատրաստ է դիւրութիւններ ընծայելու երկրէն ներս կազմակերպութեան բոլոր աշխատանքներուն:

ՌՈՒՍԱԿԱՆ ԹԵՐԹԻ ՄԸ ՀԱՄԱՁԱՅՆ ԹՈՒՔԻԱ ԶԻՆԱՂԱԴԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՕԳՏԱԳՈՐԾԵՅ ԹՐԵՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԻՏԼԻՊԻ ՄԷՅ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ռուսական «Նիզաֆիսմայա Կազեթա» թերթը յայտնեց, որ բոլոր կողմերը ներառեալ Ռուսիան յուսահատ են Իտլիպի տագնապի խաղաղ լուծման գծով: «**Թուրքիա զինադադարի որոշումը օգտագործեց իտլիպի մէջ իր բանակը տարածելու համար**» խորագիրը կրող յօդուածով թերթը յայտնեց, որ թրքական վարչակարգը կը շարունակէ իր բանակը Իտլիպ ուղարկել հակառակ Մոսկուայի հետ տեղի ունեցած զինադադարի համաձայնութեան: Թերթին համաձայն, Անգարայի անվտանգութիւնը կ'երաշխարուի միայն ՆԱԹՕ-ի անդամակցութեամբ, Թուրքիոյ արարքները անխոհեմութիւն կը համարուին, որովհետեւ Թուրքիա կարողութիւն չունի առանձին ճակատներ բանալու դրացի երկիրներու հետ:




Ըստ ռուսական թերթին, Անգարա վստահ է, որ զինեալ ահաբեկչական խմբաւորումները երկար պիտի չտոկան առանց իր աջակցութիւնը վայելելու եւ ուշ կամ կանուխ անոնց ճակատագիրը սուրիական բանակին հետ դէմ յանդիման գալը պիտի ըլլայ: Թերթին համաձայն, Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի բանակցելուն նպատակը Սուրիոյ մէջ թրքական ուժերուն զինուորական գործողութիւնները դադարեցնելը չէ, այլ ժամանակաւոր զինադադար յառաջացնելն է՝ զինեալ ահաբեկչական խմբաւորումները վերստին մարգելու եւ թրքական բանակէն անդամներ Սուրիա ուղարկելու համար: Թերթը եզրափակելով իր յօդուածը յայտնեց, որ նախորդ շաբթուան ընթացքին Թուրքիա մեծաքանակ եւ մեծածախս զինամթերք սպառեց, միւս կողմէ Սուրիական Բանակի Հրամանատարութիւնը պատրաստակամութիւն յայտնեց Իտլիպի մէջ իր զինուորական գործողութիւնները սաստկացնելու միջեւ նահանգին ամբողջական ազատագրումը:

ՀԱՐՄ-Ի ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԸ ՀԵՏՂ ԵՐԹՈՎ ՄԸ ԻՐ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆԵՅ ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԱՐԱՆԻՆ

8 Մարտի Սուրիոյ Յեղափոխութեան 57-ամեակին եւ Սուրիոյ Խորհրդարանին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման ու դատապարտման գոյգ առիթներով, ՀԱՐՄ-ի Դամասկոսի Մասնաճիւղի Վարչութիւնը կազմակերպած էր երախտագիտութեան շքեղ երթ մը, Կիրակի, 8 Մարտ 2020-ի առաւօտեան ժամը 11:00-ին:



ՀԱՐՄ-ի Դամասկոսի Մասնաճիւղի արիարենոյշները շնորհակալութեան խօսքեր պարունակող պաստառ մը բարձրացուցած էին, որուն վրայ տեղադրուած էր Սուրիոյ նախագահ Պաշշարալ Ասատին պատկերը:



Անոնք Սուրիական Հայրենիքին դոճըն հպարտօրէն ծածանել տալով տողանցեցին միջեւ խորհրդարանի շէնք: Այնտեղ երթի մասնակիցները դիմաւորուեցան Սուրիոյ խորհրդարանի նախագահ Համուտա Սապպաղի եւ երեսփոխաններու կողմէ, որոնց կարգին երեսփոխան ղոկտ. Նորա Արիսեանի կողմէ:

Հինգերորդ վաշտի շեփորախումբը նուազեց Սուրիոյ քայլերգը եւ փունջ մը ազգային-հայրենասիրական ստեղծագործութիւններ:

Երախտագիտութեան հաւաքին ներկայ էին Դամասկոսի Սկաւտական Շարժումի Կեդրոնական Վարչութեան անդամներ, միութիւններու ներկայացուցիչներ եւ դամասկահայերու հոծ բազմութիւն մը:



Շեփորախումբի ելոյթէն ետք, հինգերորդ վաշտի խմբապետ Միհրան Ղազարեան յանուն ՀԱՐՄ-ի Դամասկոսի Մասնաճիւղին խորհրդարանի նախագահին յանձնեց սկաւտական փողկապը, ապա Սուրիոյ խորհրդարանի նախագահ Համուտա Սապպաղ խորհրդարանի դահլիճէն ներս ընդունեց ՀԱՐՄ-ի տարագաւոր քոյրերն ու եղբայրները եւ պատասխանատուները: Ընդունելութեան ներկայ էին Երեսփոխան ղոկտ. Նորա Արիսեան եւ «Ահարունեան» կեդրոնի ներկայացուցիչ Արմէն Ուրֆալեան:



Համուտա Սապպաղ շերմօրէն ողջունեց ՀԱՐՄ-ի Դամասկոսի Մասնաճիւղի այս նախաձեռնութիւնը: Ան բարձր գնահատեց հայ ժողովուրդին հաւատարմութիւնը

Շար. Էջ 12 >

Խմբագրական

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ ՆԵՂ ԶՈՐԻՉՈՆՆԵՐՈՒ ՄԵՋ

Յաճախ քննարկումի առարկայ կը դառնան կնոջ ազատության, տղամարդու համահաւասար իրաւունքներու ձեռքբերման հարցերը, համեմատութիւններ կը դրուին արեւելքի եւ արեւմուտքի մէջ ապրող կիներուն միջեւ, եզրակացութիւններ ալ կը կատարուին հիմնուելով երբեմն ձեւական բաղդատութիւններու, մտայնութիւններու, նոյնիսկ բարոյական ըմբռնումներու տարբերութիւններուն հիման վրայ:

Ներկայ մեր իրականութեան մէջ կինը ամէն տեղ է՝ հասարակական կազմակերպութիւններու, գիտական կեդրոններու, քաղաքական, մշակութային ասպարէզներու, համայնքային կեանքի կրթական, մարզական, բարեսիրական տարբեր ոլորտներու մէջ: Ան հաստատութիւններու ղեկավարման մաս կը կազմէ, պաշտօններու կը տիրանայ առանց կաշկանդումի:

Հայկական մեր իրականութեան մէջ այս առիթները նոր չեն բացուիր կնոջ դիմաց: Հայաստանի առաջին Հանրապետութեան օրերէն կինը համահաւասար իրաւունք կը վայելէր ընտրելու եւ ընտրուելու, Հանրապետութեան դեսպանը ճափոնի մէջ եղած էր տիկին Տիանա Աբգարը, որ ուշագրաւ դարձած է իր դիւանագիտութեամբ ու քննական մտածողութեամբ:

Այս բոլորը, սակայն, կը մնան կաղապարուած առիթներ, եթէ կինը անկախ չդառնայ իր որոշումներուն, մտածելակերպին ու խօսքին մէջ, եւ շարունակէ տուրք տալ իր ապրած միջավայրին, կաշկանդուիլ անոր սահմանած անգիր օրէնքներով, երբեմն լուռ ելք որոնել անհաւասարութիւն կամ անարդարութիւն դրսեւորող կացութիւններէն, առանց կարենալ ձեռք բազատելու անոնց բացասական ազդեցութենէն: Յաւրջ կինը մեր միջավայրին մէջ տակաւին կը մտածէ այլոց կարծիքին մասին, «թէ ինչ կրնան մտածել իր մասին» ի մտատանջութենէն լրիւ չէ ձեռք բազատած ան: Մտատանջութիւն մը, որ երբեմն կը խեղդէ իր մտքին ու սրտին ձայնը, կը ջլատէ իր ձգտումները եւ կը կաշկանդէ գործունեութիւնը:

Հանրային կարծիքը մեծապէս կ'ազդէ իր քայլերուն վրայ, եւ այդ պատճառով ալ յաճախ կաշկանդում մը կայ իր աշխատելաճիւղին, արտայայտութիւններուն մէջ, որոշ չափէ մը դուրս չելլելու ճիգ մը նաեւ:

Այս կացութիւնը միայն հայկական միջավայրերու չի վերաբերիր հաւանաբար, սակայն անոր յարթահարումը մեր միջավայրին ի նպաստ պիտի ըլլայ անկասկած:

Նկատառելի նուաճումներ ձեռքբերած մեր հասարակութիւնը ձեռք բազատելու է կնոջ համար գծուած հին ու նեղ սահմաններէն ու առողջ մտայնութեամբ նայելու է կնոջ նոր կերպարի ձեւաւորման:

Բարոյական իր սկզբունքներուն տեր հայ կինը վերջապէս գործելու է առողջ եւ տրամաբանական համոզումներով առաջնորդուած, ոչ թէ միջավայրին պարտադրած սահմաններով:

Մեր հասարակութեան կարելորդ մէկ համեմատութիւնը կը կազմէ կինը, ու որքան անկաշկանդ ու առողջ մթնոլորտի մէջ գործէ ան, այնքան բարեբար դերակատարութիւն կ'ունենայ իր միջավայրին մէջ:

«Գ.»

-Սուրիոյ մշակոյթի նախարարութեան կազմակերպութեամբ 8 Մարտին, Դամասկոսի ազգային օփերայի տան մէջ տեղի ունեցած մշակութային փառատօնին ընթացքին պարզեւատրուած է Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան, սուրիական-հայաստանեան խորհրդարանական բարեկամութեան յանձնախումբի նախագահ, պատմաբան, թարգման, դոկտ. Նորա Արիստանը:



Պարզեւները յանձնած է Սուրիոյ մշակոյթի նախարար Մուհամմետ ալ Ահմատ:

Այս առիթով պարզեւատրուած են թարգմաններ, դերասաններ եւ այլ գործիչներ, որոնք իրենց ներդրումը բերած են Սուրիոյ մշակոյթի զարգացման:

-Երկուշաբթի, 9 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ նախարարներու հորհուրդը իր շաբաթական նիստին ընթացքին պսակածեւ (քորոնա) ժահրէն նախագուշանալու համար որոշեց շուրջ 1 ամսուան տեւողութեամբ դրացի պետութիւններու հետ՝ ինչպէս Իրաքի եւ Յորդանանի, սուրիական սահմանները փակել, իսկ այն պետութիւններուն հետ, որոնց մէջ տարածուած է պսակածեւ ժահրը՝



2 ամիսով: Խորհուրդը յանձնարարեց Սուրիոյ Տեղեկատուութեան եւ Առողջապահութեան նախարարութիւններուն գործակցաբար Սուրիոյ Կրթութեան եւ Բարձրագոյն Կրթութեան նախարարութիւններուն հետ ծրագիր մը մշակել՝ ժողովուրդը եւ յատկապէս դպրոցական եւ համալսարանական աշակերտութիւնը այս ժահրէն նախագուշացնելու համար: Խորհուրդը շեշտեց, որ պատասխանատու բոլոր կողմերը պարտին գործադրել նախարարութեան յառաջացնելիք ծրագիրը, իսկ Փոխադրութեան նախարարութեան հետ գործակցելով փոխադրակառքերը քննել նախքան անոնց Սուրիա մուտք գործելը:

-Սուրիոյ առողջապահութեան նախարար Նիզար Եագճի յայտարարեց, որ ներկայ դրութեամբ Սուրիոյ մէջ պսակածեւ (քորոնա) ժահրէն վարակուողներ չկան: Ան դիտել տուաւ, որ նախարարութիւնը Չինաստանի մէջ ժահրին յայտնաբերման առաջին օրերէն նախագուշակական բոլոր միջոցները կիրարկած է սահմանային կետերու վրայ եւ օդակայաններու մէջ, ստուգելու համար երկիր ժամանողներու առողջական վիճակը, ինչպէս նաեւ, գործակցաբար առողջապահութեան միջազգային կազմակերպութեան հետ, երկրէն ներս համապատասխան տարրալուծարաններն ու բուժման կեդրոնները օժտած է անհրաժեշտ կազմածներով, դեղորայքով եւ բժիշկներով: Ան այժմ Սուրիոյ տարածքին 1126 բուժման կեդրոններ հաստատուած են:



-Չորեքշաբթի, 11 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ սուրիական տարբեր նահանգներու մէջ նշանակուած թեկնածուներու ցանկագրման յանձնախումբերը վեցերորդ օրն ըլլալով կը շարունակեն ստանալ յառաջիկայ 13 Ապրիլ 2020-ին Սուրիոյ Խորհրդարանի օրէնսդրական երրորդ շրջանի երեսփոխանական ընտրութիւններու թեկնածուներուն դիմումները:



-Հինգշաբթի, 5 Մարտ 2020-ին, Ռուսիոյ եւ Թուրքիոյ նախագահներ Փութին եւ Էրտողան շուրջ 6 ժամուան տեւողութեամբ հանդիպում ունեցան՝ Իտլիայի մէջ գինադադար յայտարարելու եւ երկու երկիրներուն միջեւ կընքուած նախկին համաձայնագիրներու շուրջ քննարկումներ կատարելու: Աւարտին անոնք ստորագրեցին յաւելեալ յուշագիր մը:



Թուրքիոյ եւ Ռուսիոյ պաշտպանութեան նախարարներուն ստորագրութեամբ հաստատուած, քակի մը կետեր բաղկացած յուշագիրին մէջ առաջին դրոյթով կը հաստատուի Սուրիոյ տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը, տագնապին բացառապէս խաղաղ միջոցներով հանգուցալուծումը: Կողմերը անգամ մը եւս կը շեշտեն ահաբեկչութեան հոսքի դադարեցման եւ անոր դէմ պայքար մղելու անհրաժեշտութիւնը:

Ներկայ տուեալներով, գինուորական վերջին գործողութիւններուն հետեւանքով Հալեպը եւ Լաթաքիան կապող, ազատագրուած սուրիական M4 մայր ճամբուն երկու կողմերէն դէպի հիւսիս եւ հարաւ սահմանուած է 6-ական քլմ. ապահովութեան գօտի:

Լուրեր Հայաշխարհին

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆԴՈՒՆԱԾ Է ՀՅՂ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Յունաստանի Հանրապետության Նախագահ Փրոքոփիս Փալուփուլու, Աթենքի Նախագահական ապարանքին մեջ, ուրբաթ, 6 Մարտի երեկոյան, ընդունեց ՀՅՂ ներկայացուցչության այցելութիւնը՝ գլխավորութեամբ ՀՅՂ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեանի եւ ընկերակցութեամբ ՀՅՂ Յունաստանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Սերգո Գուլումճեանի եւ անդամ Հոնիփիսմէ Յարութիւնեանի:



Նախագահ Փրոքոփիս Փալուփուլու ջերմօրէն ողջունեց ՀՅՂ Բիւրոյի ներկայացուցիչին այցելութիւնը Յունաստան՝ անդրադառնալով իր սերտ ու երկարատեւ կապերուն Յունաստանի հայ համայնքին եւ ՀՅՂ Հայ Դատի Յանձնախումբին հետ, ապա նաեւ խօսեցաւ անցեալ տարուան վերջաւորութեան Հայաստան կատարած իր այցելութեան եւ Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմէն Սարգսեանի հետ կայացած հանդիպման բարձր մակարդակին մասին: Ան խանդավառութեամբ խօսեցաւ Երեւանի մէջ ունեցած պետական շփումներու բեղուն արդիւնքներուն մասին եւ զօրակցական իր անվերապահ կեցուածքը արտայայտեց հայ ժողովուրդին հանդէպ՝ Հայաստանի եւ սփիւռքի մէջ:

Խօսակցութիւն ծաւալեցաւ Յունաստանի սահմաններուն վրայ ստեղծուած լարուած ու բարդ իրավիճակին շուրջ, որ անգամ մը եւս ցոյց կու տայ համայն հանրութեան առջեւ Թուրքիոյ որդեգրած ծաւալապաշտ գործելաձեւը, որ ճնշումներու ու սպառնալիքներու լեզուով իր օգտին կը փորձէ պարտաւորեցնել Եւրոպան եւ մարդկութիւնը:

ՀՅՂ Բիւրոյի ներկայացուցիչը վստահեցուց Յունաստանի Հանրապետության Նախագահին, որ ՀՅՂ Դաշնակցութիւնը, իր աշխարհասփիւռ կազմակերպական կառուցով, Յունաստանի եւ յոյն ժողովուրդի անկեղծ ու պատրաստակամ գործակիցն է: Ան շնորհակալութիւն յայտնեց, յունահայութեան հանդէպ երկար տարիներէ ի վեր Յունաստանի Նախագահին ունեցած անկեղծ վերաբերմունքին համար ու համոզում արտայայտեց, թէ բարձրամակարդակ ու ջերմ յարաբերութիւնները պիտի շարունակեն պահպանուիլ ապագային եւս, բոլոր այն մարզերուն մէջ, ուր Յունաստանի Նախագահը պիտի շարունակէ իր գործունեութեան շրջագիծը:

ՀՀ ԱԳՆ. «ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԲԱՅՆԵՐԸ ԴԻՏՈՒՄՆԱԽՈՐ ԲՆՈՅԹ ԿԸ ԿՐԵՆ»

10 Մարտին Հայաստանի Արտաքին գործոց Նախարարութիւնը յայտարարութիւն մը հրապարակեց:

Հայաստանի հետ պետական սահմանին վրայ իրավիճակը սրելու, լարուածութեան աշխարհագրութիւնը ընդլայնելու եւ առկայ լարուածութեան նուազեցման կառուցները գործի չդնելու Ատրպէյճանի պարբերական փորձերը կը փաստեն, որ տարածաշրջանային անվտանգութիւնը եւ խաղաղութիւնը վտանգելու Ատրպէյճանի քայլերը միտումնաւոր բնոյթ կը կրեն:



«10 Մարտին Ատրպէյճանի զինուած ուժերուն կողմէ Հայաստանի եւ Ատրպէյճանի պետական սահմանի նախիջեւանեան հատուածին մէջ զինադադարի դրութեան խախտման հետեւանքով դիպուկահարի կրակոցէ մը մահացու վնաս ստացած է զինուած ուժերու պայմանագրային զինուորական ծառայող Չոհրապ Գրիգորի Սիւնտսեան (ծն. 1984): Մեր խորին ցաւակցութիւնը եւ զօրակցութիւնը կը յայտնենք զհուած զինուորիկն ընտանիքի անդամներուն եւ հարազատներուն:

«Վերջին օրերուն սա Ատրպէյճանի հերթական փորձն է միտումնաւոր կերպով սրելու իրավիճակը հայ-ատրպէյճանական պետական սահմանին վրայ: 6 Մարտին, ատրպէյճանական զինուած ուժերը փորձած էին իրականացնել ներթափանցում մը դէպի Տաւուշի շրջան:

«Ատրպէյճանի պարբերական փորձերը սրելու Հայաստանի հետ պետական սահմանին իրավիճակը, ընդլայնելու լարուածութեան աշխարհագրութիւնը եւ չկիրառելու առկայ լարուածութեան նուազեցմանն ուղղուած մեքանիզմները կը վկայեն, որ տարածաշրջանային անվտանգութիւնը եւ խաղաղութիւնը վտանգելու Ատրպէյճանի քայլերը կը կրեն դիտումնաւոր բնոյթ», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

ՀՅՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ. «ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՔԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԷՆ Է»

ՀՅՂ ներկայացուցիչները 31 Մարտին տեղի ունեցաւ ընտրութիւններու քարոզարշաւի հերթական հանդիպումները 9 Մարտին շարունակած են Մարտակերտի շրջանի Զլտրան, Կնկաւան, Վաղուհաս, Չարտախաչ, Չագլիկ, Հաթերք եւ Շահումեանի շրջանի Ակնաբերդ համայնքներուն մէջ:

Նախքան հանդիպումները, Դաշնակցութեան կողմէ առաջադրուած Նախագահի թեկնածու Դաւիթ Իշխանեան պատգամաւորութեան թեկնածուներուն հետ ծաղիկներ տեղադրած է արցախեան ազատամարտի հերոսներու յիշատակին:

Տեղի ունեցած հանդիպումներուն ընթացքին ՀՅՂ-ի ներկայացուցիչները խօսած են Նախընտրական ծրագրի հիմնադրոյթներուն մասին եւ պատասխանած ներկաներուն հարցումներուն:

Համայնքներու բնակիչները հետաքրքրուած են փութածութեան եւ հովանաւորութեան դէմ պայքարի, պետականամէտ արժեքամակարդով երիտասարդներու դաստիարակութեան, ներկայ քաղաքական իրավիճակի եւ այլ հարցերու մասին ՀՅՂ-ի տեսակետներով:

ՀՅՂ-ի ներկայացուցիչները յայտնած են, որ փութածութեան եւ հովանաւորութեան դէմ համապարփակ պայքարի կազմակերպումը ՀՅՂ-ի կողմէ միշտ դիտարկուած է իբրեւ լիարժէք ժողովրդավարութեան, երկրի կայուն զարգացման, քաղաքացիական հասարակութեան կայացման, ընկերային արդարութեան եւ համերաշխութեան, օրէնքի գերակայութեան հաստատման հիմնական գրաւականներն են:



ԿԻՊՐՈՍԻ ՄԵՋ ԱՏԵՂՈՒՄԸ Ե ԱՐՃԱՆԻ ՀԵՏ ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԱԿ

6 Մարտ 2020-ին Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբին Նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Արցախին նուիրուած ձեռնարկ մը: Արցախի Հանրապետության Արտաքին գործոց Նախարարութիւնը հաղորդեց, որ աշխատանքային այցելութեամբ Կիպրոս գտնուող



Արցախի Հանրապետության արտաքին գործոց Նախարարի տեղակալ Արմինէ Ալեքսանեան մասնակցած է ձեռնարկին, որուն ընթացքին յայտարարուած է Կիպրոսի մէջ Արցախի հետ բարեկամութեան շրջանակի ստեղծման մասին: Բարեկամութեան շրջանակի անդամ են Կիպրոսի խորհրդարանի, քաղաքային խորհուրդներու անդամներ, յայտնի քաղաքական գործիչներ եւ գիտնականներ:

Ներկաներուն իր խօսքը ուղղելով՝ Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Յակոբ Գազանճեան բացատրեց Արցախի բարեկամներու շրջանակի կազմութեան դրդապատճառները եւ ապա յայտարարեց խմբակի անդամներուն անունները:

Իր ելոյթին ընթացքին Արցախի արտաքին գործոց Նախարարի տեղակալը ներկայացուց Արցախի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններն ու հանրապետութեան մէջ առկայ իրողութիւնները: Ան նաեւ յիշեց տարբեր մակարդակներու վրայ արտաքին յարաբերութիւններու հաստատման ուղղութեամբ իրականացուող քայլերը՝ կարելու Նկատելով խորհրդարանական դիւանագիտութեան ձեւաչափը միջազգային հոլովոյթներուն մէջ Արցախի ներգրաւուածութեան ընդլայնման համար:

Արմինէ Ալեքսանեան ընդգծեց շարք մը երկիրներու մէջ գործող Արցախի հետ բարեկամութեան խումբերու եւ շրջանակներու դերը՝ Արցախի մասին իրազեկման բարձրացման, ինչպէս նաեւ տարբեր բնագաւառներուն մէջ երկկողմանի յարաբերութիւններու հաստատման համար բարենպաստ պայմաններու ստեղծման համար: Այս շրջագիծին մէջ արտաքին գործոց փոխնախարարը յատկապէս կարելու Նկատեց Կիպրոսի մէջ Արցախի հետ բարեկամութեան շրջանակի ստեղծումը, որ կարելիութիւն պիտի տայ կեդրոնացնելու ջանքերը՝ հաստատութեան մակարդակով ամրապնդելու եւ զարգացնելու երկու երկիրներուն միջեւ գործակցութիւնը, ինչպէս նաեւ Նպաստելու Կիպրոսի մէջ Արցախի ճանաչելիութեան բարձրացման եւ հանրապետութեան շահերու յառաջ մղման:

Արմինէ Ալեքսանեան բարձր գնահատեց Սփիւռքի աշխուժ ներգրաւուածութիւնը Արցախի մէջ զարգացման գանձան ծրագրի ներդրումը իրականացման, ինչպէս նաեւ գործուն աջակցութիւնը հանրապետութեան արտաքին կապերու հաստատման եւ ընդլայնման:

ՍԱՐՄԱՆԱՅԻՆ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՀԵՏԵՄԱՆՔՆԵՐՈՎ

«Եվրոսի սահմանագիծին վրայ պիտի ուղարկենք յատուկ ուժերու 1000 ոստիկաններ, լրիւ գիտուած, թրջական հողերէն դուրս պահելու համար գաղթականներու հոսանքները, որոնք Յունաստանին կողմէ կը կասեցուն սահմաններուն վրայ», անցեալ Հինգշաբթի յայտնեց Թուրքիոյ ներքին գործոց նախարար Սուլէյման Սոյլու:

Այնքան է, որ Թուրքիա այլևս պատերազմական թատերաբեմի կը վերածէ Եվրոսի սահմանագիծը՝ աննախադէպ հետեւանքներով:

Հազար թուրք ոստիկաններ պիտի տարածուին Եվրոս գետի թրջա-



կան ցամաքին վրայ, գանազան միջոցներով դիրացնելու համար գաղթականներու ապօրինի մուտքը Յունաստան:

Պահ մը մտաբերենք հետեւեալ պատկերը:

Թուրքերը լաստերու մէջ կը տեղաւորեն գաղթականները, որոնք կը ստիպեն անցնիլ յունական ցամաք:

Բնականաբար, յունական ուժերը ձեռնածալ պիտի չմնան, գաղթականներուն ետ պիտի մղեն՝ դէպի Թուրքիոյ ցամաքը:

Նախարարին համաձայն, թուրքերը պիտի կասեցնեն վերադարձը՝ քիմիական եւ արցունքաբեր ռումբեր նետելով գաղթականներուն վրայ, հաւանաբար՝ լաստիկէ փամփուշտներ պիտի արձակեն, իսկ գիշերները, մութին մէջ՝ հաւանական է, որ իրական փամփուշտներ եւս գործածուին:

Թուրքիոյ ծրագիրը աւելի քան յստակ կը դառնայ:

Գաղթականները կ'ամ խեղդամահ պիտի ըլլան, Յունաստանը ամբաստանելով, թէ անմեղ ժողովուրդ կը սպանէ, կամ ալ թրջական ուժերը պիտի փորձեն առանց որեւէ հակակշիռի՝ իրարանցում ստեղծել գետի յունական ափին վրայ, որպէսզի գաղթականները ի վերջոյ կարողանան ոտք կոխել Յունաստան:

Իսկ յունական ապահովական ուժերը կրնա՞ն արդեօք ձեռնածալ մնալ: Աշխարհի վրայ չկայ գօրք կամ ոստիկանական ուժ, որ անպատասխան կրնայ ձգել կատարուած ոտնձգութիւնը: Իսկ, ի՞նչ պիտի պատահի, եթէ յունական կողմը իր ազդու պատասխանը տայ...

Թուրքիոյ նախագահ Էրտողան վտանգաւոր խաղերու մէջ մտած է: Ան կրակով կը խաղայ, որուն մէջ կը ներքաշէ Յունաստանը եւ տասնեակ հազարաւոր գաղթականներ, որոնք ոչ մէկ կապ ունին Սուրիոյ գաղթականութեան հետ, այլ՝ Թուրքիա հասած են Ասիոյ գանազան երկիրներէ...

Յունաստան պարտի ցուցաբերել պաղարհուսութիւն եւ կատարել գգուշաւոր եւ նուրբ շարժումներ, որոնք սակայն բաւարար չեն:

Եւրոպայի պարտի գործնապէս գորակցիլ Յունաստանին: Ազնիւ խօսքերով եւ մտախնայներով կարելի չէ կացութիւնները շրջել: Գերմանիոյ նման երկիր մը կարծեք անտարբեր կը դիտէ ստեղծուած իրավիճակին եւ որեւէ յանձնառութեան տակ չի մտնէր գաղթականներու հարցին լուծման համար: Յունաստան միակ կանգնած կը թուի ըլլալ «սուլթան»ին կողմէ միջազգային օրէնքին ու կանոններուն կոպիտ խախտումներուն եւ ոտնահարումներուն դիմաց:

Յունաստանի սահմանները նաեւ եւրոպական սահմաններ են: Եւրոպայի պարտի իր սահմաններուն տեր կանգնիլ:

«Ազատ Օր»

www.kantsasar.com
www.kantsasar.com
www.kantsasar.com

ՀԱՌՅԱՋՈՒԹՅ

ՄԱՐԳԻՍ ԳԱՄԱՐՃԵԱՆ. «ԱՅՍ ՅՈՒՇԱԳԻՐԸ ԿԸ ՍՏԻՊԷ ԹՈՒՐԶԻՈՅ ԸՆԴՈՒՆԻՒԼ ՍՈՒՐԻՈՅ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ ԻՐ ՆԵՐԿԱՅ ՍԱՏՄԱՆՆԵՐՈՎ»

Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ գոյացած զինադադարի համաձայնութիւնը նոր իրավիճակ ստեղծեց յատկապէս Հայէ-Դամասկոս, Հայէ-Լաթաքիա ճամբաներուն բանեցումով: Այս նիւթին շուրջ «Գանձասար» հարցազրոյց մը ունեցաւ քաղաքական վերլուծաբան Սարգիս Գասարճեանի հետ:

Ստորեւ կը ներկայացնենք զայն.

«Գանձասար»- Փութին Էրտողանի հանդիպումին արդիւնքով ստորագրուած յուշագիրով Թուրքիան նոր պարտաւորութիւններ կը ստանձնէ:

Սարգիս Գասարճեան- Այս յուշագիրը թէեւ նոր պարտաւորութիւն չի դնէր Թուրքիոյ վրայ, սակայն

ճամբայ պետք է գտնեն դէպի ծովեզերք, ծովեզերքէն ալ դէպի արտաքին աշխարհ: Այս ճամբուն երկրորդ կարեւորութիւնը այն է, որ Իտալիայը ընդհանրապէս կը ներառէ ապահովական գօտիին մէջ: Այսօր Իտալիայի միակ բաց սահմանը, կամ Սուրիոյ պետութեան կողմէ չպաշարուած սահմանը, թրջական սահմանն է, հետեւաբար Իտալիայը դէպի սուրիական տարածքներ որեւէ ազատ եւ բաց սահման չունի: Իսկ M4-ի երրորդ կարեւորութիւնը բարոյական կարեւորութիւնն է, այսինքն վերջի վերջոյ այդ ճամբան, որ ընդհանրապէս 2012-էն ի վեր փակ էր, գինեակներու վերահսկողութեան տակ էր, այլևս բաց է ու ապահով: Այս մէկը բարոյական յաղթանակ է Սուրիոյ



կը ստիպէր Թուրքիոյ ընդունիլ Սուրիոյ ներկայ վիճակը իր ներկայ սահմաններով: Այսինքն ընդունիլ 2020-ի ուժերու դասաւորման քարտեզը, որ գծուեցաւ սուրիական բանակին զինուորական գործողութիւններուն եւ յառաջընթացին հետեւանքով: Հետեւաբար կարծեմ այս յուշագիրին կարեւորութիւնը Թուրքիոյ պարտաւորութիւններու առնչութեամբ չէ, որովհետեւ Թուրքիա 2018-ի Սեպտեմբերին նոյն պարտաւորութիւնները յանձն առած էր, սակայն չէր գործադրած: Այս յուշագիրին կարեւորութիւնը այն է, որ Թուրքիա իր չիրականացուցած պարտաւորութիւնները այժմ ստիպուած եղաւ իրականացնելու, երբ սուրիական բանակը գետնի վրայ փոփոխութիւններ յառաջացուց. նկատի ունիմ M5՝ Հայէ-Դամասկոս մայր ճամբուն բացումն ու սուրիական բանակին վերահսկողութեան տակ առնուիլը:

«Գ.»- Ինչպիսի՞ առաւելութիւններ կրնայ ունենալ M4՝ Հայէ-Լաթաքիա ճամբուն վերաբանեցումը Սուրիոյ համար:

Ս.Գ.- M4-ի կարեւորութիւնը այն է, որ երկրի տնտեսական մայրաքաղաքը՝ Հայէլը, Սուրիոյ արդիւնաբերական հիմնական կեդրոնը, պիտի կապէ ծովեզերքին՝ Լաթաքիոյ հետ: Այս ճամբուն ամենամեծ կարեւորութիւնը, իմ կարծիքով, տնտեսական կարեւորութիւնն է, որովհետեւ Հայէլի արտադրութիւնները հետագային անպայման

պետութեան համար եւ բանեցուած յաւելեալ ճնշում է գինեակներուն վրայ:

«Գ.»- Այս յուշագիրով հաստատուեցան Սուրիոյ տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը: Ասիկա ի՞նչ պարտաւորութեան տակ կը դնէ ստորագրող կողմերը, առաւելաբար Թուրքիան:

Ս.Գ.- Յուշագիրին բարոյական ազդեցութիւնը շատ մեծ է, որովհետեւ Էրտողան նախքան Մոսկուա մեկնիլը սպառնալիքներով հանդէս կու գար, ըլլալ իր հանդիպումներուն կամ մամլոյ ասուլիսներուն ընթացքին, իսկ յուշագիրը չի պարունակէր Էրտողանի հիմնական պահանջքը, յատկապէս այն, որ սուրիական գօրքը պետք է թրջական կէտերէն հեռու մնայ, այսինքն՝ գործնականօրէն քաշուի: Թուրքիոյ նկատմամբ, սակայն, պետական թէ ժողովրդային մակարդակներով մտավայելութիւն գոյութիւն ունի Սուրիոյ մէջ, որովհետեւ բոլորն ալ քաջ գիտեն, որ Էրտողան այնորժակներ ունի սուրիական հողերու վրայ եւ այդ հողերը Թուրքիոյ կցելու քաղաքականութիւն կը վարէ: Թրջական այս նկրտումները միայն Սուրիոյ վերջին դէպքերուն արդիւնքով չեն յառաջացած, պատահական չէր Էրտողանի քանի մը առիթներով Լոզանի մասին խօսիլը, Օսմանեան Կայսրութեան սահմաններուն մասին խօսիլը: Թուրքիոյ նախագահին նման արտայայտութիւնները միայն այսպէս կրնան թարգմանուիլ:

ԾԱՌԱՍՏԱՆ



Սարին Ազպաշ

Կը հաւատա՞ք, որ հողը իր ներքին բնոյթին մէջ կը կրէ իւրայատուկ նկարագիր մը եւ այս նկարագիրը փոխանցելի է՝ կը հաղորդուի բնութեան բոլոր տարրերուն:

Երբեմն մտքիս մէջ կը փորձեմ պատկերել հին Պոլիսը, կը ջանամ վերացական պատկերացումի մը հասնիլ՝ կարօտախտի եւ պատրանքի խառն զգացումներով: Չեմ գիտեր ինչու, այս մտային ճամբորդութիւններու ատարին, այքիս ամբողջ ի յայտ կու գայ սօսիներու ծառաստանը: Այս ծառաստանը երկար ժամանակ չէ ունեցած այցելուներ, սակայն վէտ սօսիները դեռ յուսալի կը սպասեն պայծառ անասուններու:

Անդորրութիւն... պատրաստ եմ կրկին փարելու հաստաբուն սօսիներուն: Գիտեմ, որ ամեն մէկը ունի իր ներքին բնոյթը, իւրայատկութիւնը, նկարագիրն ու ապրումները: Գիտեմ, որ բնութիւնը բացառիկ յիշողութիւն ունի: Բոպիկ եմ: Յողը

տակ 19-րդ դարու կենտրոն գործունեութիւն կը ծաւալէ հսկայ մը՝ Նազըր Վահան, որ իր աղջկան՝ Սրբուհի Տիւսաբի խօսքերով «բոլորովին սեր էր եւ անձնուիրութիւն»: Անշուշտ գիտեմ, որ ամենամեծ փափաքն էր գիտութեան լոյսը տարածել մեր հասարակութեան մութ խաւերուն եւ ան հոգեւոր մայր կը հանդիսանար բազում հայ աղջիկներու:

Կը յիշեմ, Պոլիս, շա՛տ լաւ կը յիշեմ: Գեղեցիկ Պէշկաշ թաղիդ մէջ 1830 թուականին կը ծնի ուրիշ հերոս մը՝ Էլպիս Կեսարացեան, որ կը համարուի նաեւ առաջին հայ կին լրագրողը: «Յայկազն Օրփորդաց» հրատեր մը կը դրկէ 1862-ին հիմնելով «Կիթառ» հանդէսը ու ամառին թիւին մէջ մեծատառերով կը հաստատէ՝ «ԻՐԱՌԱՆԸ Ի ԳՈՐԾ ԴՆԵԼԸ ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ ՉԷ»: Իր ամբողջ կենսական ընթացքին կ'աշխատի կիներու դաստիարակութեան համար եւ անհրաժեշտ կը համարէ հաւաքականութեան գարգացման

Աշակերտական Անկիւն

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ



Աստղիկ Դանիէլեան

Կեանքի ամենասիրուն ու անմեղ տարիները մանկութեան տարիներն են: Տարիներ, որոնք անկրկնելի ու անմոռանալի են:

«Ամեղութիւն». երբ այս բառը լսեմ, անմիջապէս միտքս կու գան մանուկները, որոնք չեն գիտեր կեանքի դժուարութիւնները, այլ միայն՝ բարութիւն, սէր ու երազ:



Մանկութեան ժամանակաշրջանին ամեն մանուկ կը սկսի մտածել ապագայի մասին, չգիտնալով որքան դժուար է կեանքի ճամբան, եւ իրենց մտածումներէն շատ անելի տարբեր է: Ամեն մանուկ կ'ունենայ իր երազային ու հեքիաթային աշխարհը: Մանուկի մը երբ հարցնես՝ «Ի՞նչ կ'ուզես», ան պիտի նայի աչքերուդ ու ըսէ՝ «Մեծնալ», ինչ որ պիտի կատարուի: Բայց մանկութեան վերադառնալ՝ կարելի չէ:

Ամեղութեան մեծագոյն օրինակներն են մանուկները, որոնք ո՛չ ատել գիտեն, ոչ ալ չար բաներ: Անոնց բոլոր կապերը հիմնուած են սիրոյ վրայ:

Շատ փոքրիկներ կան, որոնք գրկուած են իրենց մանկութենէն, իրենց խաղի ու հեքիաթային աշխարհէն՝ պատերազմի, աղքատութեան կամ հիւանդութեան հետեւանքով: Ցաւալի ու դժուար է փոքրիկ մը իր մանկութիւնը անցնէ հոգեբով ու գրկանքներով:

Մանուկներուն պէտք է տրուի խաղաղ ու հանգիստ մանկութիւն, այլապէս անոնք կ'ունենան վախով լեցուն ապագայ մը: Պէտք է աշխատիլ գրկուած մանուկներու աշխարհը փոխելու համար, որպէսզի իրենց մանկութիւնը ուրախ անցնի ու անոնց երազները իրականութիւն դառնան: Մանկութեան յուշերը միշտ քաղցր կը մնան:

Թող որ ամեն մանուկ քաղցր յուշերով խաղաղ ու հանգիստ մանկութիւն ունենայ:

ՃԱ. Դասարան

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ընկերան



խոնաւ է, տեսակ մը մտերմութիւն կը բուրէ: Ծառաստանը կ'ողջունէ գիս ու ես խանդավառ ներս կը մըտնեմ արահետէ մը:

Ահա այս սօսիներու խոշոր ծառաստանը, եռանդուն այս հողակոյտը Պոլիսն է: Պոլիսը՝ երբեմնի այդ քաղաքը, որ իր հուժկու հերոսներով յամառօրէն դէմս կ'ելլէ ու ցոյց կու տայ իր բոլոր ձեռքբերումները, ինչպէս ալ եւր մը հպարտօրէն պիտի ցուցադրէր իր հին լուսանկարները:

Կը յիշեմ, Պոլիս, շա՛տ լաւ կը յիշեմ: Գիտեմ, որ հսկայ հովանիի

համար կիներու ազատութիւնը:

Կը յիշեմ, Պոլիս, շա՛տ լաւ կը յիշեմ: Գիտեմ, որ պատկառելի Օրթագիւղ թաղիդ մէջ 1840 թուականին աշխարհ կու գայ կտրիճ մը՝ Սրբուհի Տիւսաբ (Վահանեան), որ հանդիսանալով ամառին հայ վիպասանուհին, կը սկսի գրիչ սրել անհասարակութեան դէմ: Իր գրիչին թանաք կ'ըլլայ տգիտութեան եւ թշուառութեան մէջ ընկնած հայ կիւնը: Տիւսաբ կը հաւատայ, որ կիւնը կրնայ երջանիկ ըլլալ, եթէ ապրի սեփական աշխատանքով եւ նոյնիսկ

մեր գործելու ու մտածելու եղանակին մէջ»:

Կը յիշեմ, Պոլիս, շա՛տ լաւ կը յիշեմ: Գիտեմ, որ ծովագետայ Սկիւտար թաղիդ մէջ 1863 թուականին կը ծնի դիցուհի մը՝ Չապել Ասատուր (Խանճեան), որ ստեղծելով իր գրական դպրոցը, գեղարուեստական մշակում մը կը շնորհէ հայ կնոջ իրաւունքներուն եւ ազատութեան պաշտպանութեան շարժումին: 1879 թուականին կը հիմնէ Ազգանուէր Յայուհեաց Ընկերութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ հայ իգական սեռին դաստիարակութեան նպաստել:

Կը յիշեմ, Պոլիս, շա՛տ լաւ կը յիշեմ: Երեւելի Բերա թաղիդ մէջ 1885 թուականին կը ծնի Ժիր մը՝ Յայկանուշ Մաքը (Թոփուզեան), որ անձանձրոյթ կը կրէ հայ կանանց շարժումին դրօշակը: 1919 թուականին կնոջ դատին կը նուիրէ «Յայ Կին» հանդէսը՝ մտաւորականութեան յառաջադէմ հարթակը: Առաջին թիւին մէջ Մաքը կը գրէ հետեւեալը. «Յիսն այս ուղին պէտք է հարթելք, պէտք է ընենք զայն քաղաքի լուրջ ճամբայ մը, աւելի՛ լայն, աւելի՛ ուղիղ եւ աւելի՛ ճիգ դէպի նպատակը»:

Կը կարօտնամ, Պոլիս: Կը կարօտնամ այդ հսկայ ծառաստանը, տոկուն սօսիները, որոնց ոչ բոլոր անունները կարելի է թուել այստեղ, ոչ ալ ամբողջ գործունեութիւնը: Միայն պէտք է խոստովանիմ, որ սօսիներդ դեռ հովանի են ինձի: Անոնց տերեւները թարմ են դեռ ու ես նոյն հողին վրայ կը փորձեմ արմատներ խրել:

Կը գգամ հողիդ խոնաւութիւնը: Կը գգամ այդ մտերմութիւնը: Բոպիկ եմ:

ՄՏԱՄԱՐԶԱՆԲ



ԽԱԶԲԱՌ (ՄՆ 336)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- 1- Մեծ Պահքի չորրորդ Կիրակին: Սաստիկ փոթորիկ:
- 2- Շաղկապ: Սուրիական լրատու գործակալություն: Ձայնանիշ:
- 3- Աստուածային:
- 4- Հիմա: Կոխարան:
- 5- Կաթնտու: Կրկնուած ձայնաւորներ:
- 6- Գոգ: Պէտք:
- 7- Բայց: Հայերէն առաջին տպագիր թերթին վայրը:
- 8- Աշակերտ: Վանայ լիճի կղզիներէն: Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը պետական կրօնը ընդունելու թուականը:
- 9- Ժամանում: Հակառակ՝ աղբիւր: Շատ բարակ:
- 10- Ձայնանիշ: Գարեգին Պաստրմաճեանի ծածկանունը:
- 11- Հակառակ՝ 1020: Իգական անուն:
- 12- Իրարայայջորդ տառեր: Դատարկ, փունճ:

Ուղղահայեաց

- 1- Կասկածելի:
- 2- Սուրիահայ գրողներու տարեգիրք: Միջնաբերդ:
- 3- Սաստիկ լարուածութեամբ, բորբոքած:
- 4- Առաջին կինը: Ֆրանսայի քաղաքներէն: Յորենը, կալին մէջ մանրէլու գործիք:
- 5- 5060: Վերջածանց:
- 6- Աստուածաշունչին մէջ Աբրահամի գաւակը: Հակառակ՝ ծառի բուկին ստորին մասը:
- 7- Սրբ. Աստուածածնի մայրը: Արգելական: Էական բայ:
- 8- Տառի մը հարեւանները: Զիմքի տպաւորութիւն:
- 9- Հակառակ՝ տարածքի միաւոր: Ծոխ: 403:
- 10- Անձնական դերանուն: Կրկնուած բաղաձայններ: Ձայնաւոր տառեր:
- 11- Բայական լծորդութիւն: Լեւոն Շանթի տրամաններէն:
- 12- 1964-ին Սուրիա ծնած Արցախեան ազատամարտի մասնակից: Արական անուն:

ՀՄԸՄ-ի ՊԱՄԱՍԿՈՍԻ...

Սկիզբ՝ Էջ 1

Սուրիական Հայրենիքին նկատմամբ:

Հինգերորդ վաշտի խմբապետ Միրան Ղազարեան իր կարգին շնորհաւորեց խորհրդարանի նախագահը 8 Մարտի յեղափոխութեան տօնին առիթով եւ երախտագիտութիւն յայտնեց Հայոց Ցեղա-

սպանութեան ճանաչման եւ դատաւարտման խորհրդարանի որոշումին համար, շնորհակալութիւն յայտնելով խորհրդարանի բոլոր անդամներուն եւ Սուրիոյ նախագահ տղթթ. Պաշար ալ Ասատին:

Իր կարգին, «Ահարոնեան» կեդրոնի ներկայացուցիչ Արմէն Ուրֆալեան իր երախտագիտութեան խօսքը ուղղեց խորհրդարանի նախագահին, ինչպէս նաեւ նախագահ տղթթ. Պաշար ալ Ասատին:

Պատրաստեց Մարինա Զիւլքրոշեան-Պօղիկեան

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 335)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

					8	6	3	
		6		4	9	7		
1								9
			4	6			5	
				7				
	5			2				
6								2
		7	1	8		3		
	1	5	6				7	

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 106)

Աւետիք Իսահակեանի բանաստեղծութիւնները նշանակելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 17 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Իսահակեանի բանաստեղծութիւններէն մէկը:

հ	ա	ռ	ա	ն	թ	ա	ն	ս	զ
մ	ո	մ	ա	թ	ի	կ	ա	ի	ի
ա	ն	վ	ա	պ	է	ր	ր	ր	2
յ	դ	լ	է	ր	ր	ո	ա	է	է
ր	ւ	ս	է	ր	դ	ո	տ	ց	ր
ի	է	ա	ր	ս	ն	կ	ւ	ի	ն
կ	է	մ	է	ն	ա	կ	ա	մ	է
ի	մ	ր	ա	տ	օ	մ	դ	ն	ր
ս	ա	ն	տ	ո	ւ	ն	է	է	ց
ս	ա	ր	դ	ա	ր	է	ր	ջ	ն

«Մայրիկիս», «Հովերն Առան Սա՛ր Ու Դարե՛ր», «Աստուս Գիշերներ», «Ապրում Եմ Մենակ, Մարդկանց Մէջ Օտար», «Սիրեցի, Եարս Տարան»

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄՆ 334)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1	ո	ւ	ծ	ա	ն	ա	լ	ն	2	ա	ն	
2	ւ		ե	ս	ա	յ	ի	ն	2	ե	ց	ի
3	ս	ա	ր	ք		լ	ն		ա	ր		հ
4	տ	ա	պ		ի	ա	դ		ն	ա	մ	ա
5	ա			հ	ա	պ		կ	ա	մ	ա	ր
6	կ	ը	զ	ո	հ	է		ո	ւ		ն	
7	ա	ն	ի	ծ		ս	ի	ն	ո	ր	ա	ւ
8	ր	տ			է		ն	ո	ր	ա		ս
9	օ	ր	հ	ա	ս		չ	ա		ն	ա	կ
10	ն	ա	ո	ն		զ		կ	ծ	ւ	ո	
11		ն	ո		2	ո	ւ	2	ի			յ
12	ս	ի	մ	ո	ն	վ	ր	ա	ց	ե	ա	ն

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 333)

4	2	8	1	3	7	5	6	9
7	9	5	4	6	8	2	1	3
3	1	6	9	2	5	8	7	4
1	5	9	6	8	3	4	2	7
6	8	7	2	4	1	3	9	5
2	3	4	5	7	9	6	8	1
9	6	3	7	5	2	1	4	8
8	7	2	3	1	4	9	5	6
5	4	1	8	9	6	7	3	2

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 105)

Պահուած բառը՝ «Ես Իմ Անուշ Հայաստանի»:



**ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՄԱՐԴՈՑ ՆՇԱՆԱԽՈՐ
ՄՏՔԵՐԸ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ**



ԽՈՅ

Ընկերային ձեր կեանքին մեջ յուսախաբուրթին պիտի ապրիք: Իրապաշտօրէն քննեցէք հարցերը եւ լաւապէս ճանչցէք ձեր ընկերները՝ վերլուծելով անոնց մօտեցումները:



ՅՈՒԼ

Այս շաբաթ վճռական որոշումներ մի՛ ամռէք, որովհետեւ լարուած վիճակի մեջ պիտի յայտնուիք:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Տնտեսական հարցերը կը խանգարեն աշխատանքի մեջ ձեր կեդրոնացումը: Հարցերուն լուծումներ որոնեցէք:



ԽԵՏՁԵՏԻՆ

Միջավայրի ըսի-ըսաները ժամավաճառ պիտի ընեն ձեզ, ուստի հեռու մնացէք անոնցմէ:



ԱՌԻՇ

Օգտուեցէ՛ք այսօրուան իւրապատուկ մթնոլորտէն եւ ճակատագրական յաջողութենէն, որ այսօր ձեր դէմ պիտի ելլէ: Ուրախ եւ բարեբեր օր է:



ԿՈՅ

Ձեր դիմաց ճամբան բաց է ու կանաչ, ձեզի կը մնայ ճիշդ քայլերով ընթանալ առաջ եւ գտնել յաջողութեան բանալին: Այսօր տրուած որոշումները ապագային վրայ իրենց ազդեցութիւնը պիտի ունենան:



ԿՇԻՈՔ

Աշխատանքային զգայուն կացութիւններու դէմ յանդիման պիտի գտնուիք այսօր: Խուսափեցէք վեճերէ եւ բախումներէ՝ փորձելով հասկացողութեամբ լուծել հարցերը:



ԿԱՐԻՃ

Կեանքը դպրոց է, փորձեցէք դուք ալ լաւ աշակերտ ըլլալ եւ դասեր քաղել առաւելագոյն չափով:



ԱՐԵՂԱԽՈՐ

Ձեր անշահաբեր մէկ աշխատանքէն պիտի հրաժարիք եւ Նոր ու շահաւետ ծրագիրներու համար ներդրումներ պիտի ստանաք:



ԱՅԾԵՂՋԻՐ

Ձեր ընտանիքի անդամները կը փորձեն իրենց առաւելագոյնը ընել ձեզ գոհացնելու եւ ձեր առօրեան դիւրացնելու:



ՋՐԴՈՍ

Այս շաբաթ հեւքոտ աշխատանքի շաբաթ է: Պիտի վարձատրուիք ձեր տնօրէնին կողմէ:



ՋՈՒԿ

Ձեր գաղտնիքները մի՛ բանաք բոլորին դիմաց, որովհետեւ ոմանք կրնան շահագործել ձեր բարութիւնը:

«Նոր Կինը խաղաղութեան գործին մէջ ալ ժրաջան եւ անձնուէր, կարեւոր տեղ մը առած է: Կնոջ չէ՞ր պատկաներ արդէն իր մայրական ձայնը բարձրացնել պատերազմներէ յառաջ եկած ապարդիւն կորուստներու համար: Անկա չէ՞ր արդէն որ Գթութեան Զրոյց դերին մէջ փութացած է վիրաւորեալներուն քով եւ ամուսնացած է բիւրաւոր ինկածներու ցաւը...»:



հօրը եւ եղբայրներուն աշխատութեան եւ կամ աւելի ուշ որպէս մայր, իր անհատականութեամբ, տնտեսական եւ բարոյական անկախութեան ուժով, ընտանեկան յարկին հոգերը եւ վայելքները կը բաժնէ հաւասարապէս իր ամուսնոյն հետ: Համալսարաններու եւ բարձրագոյն դպրոցներու մէջ, կինը անվիատ կը սորվի. իր տեղը ուսանողին քով որքան ալ անձուկ ըլլայ, քիչ գոհողութիւններով եւ ջանքերով չէ որ ձեռք բերած է: Ամենքս ալ գիտենք այն ընդհանուր պայքարը, որ գրեթէ ամէն երկիրներ մղած են կնոջ բարձրագոյն կրթութեան դէմ»:

Չապէլ Եսայեան



«Կինը Նոյնապիսի բնական տարերք է, ինչպէս քամին, կայծակը, հոսանքը»:

Հաքիւնըն Թորի

- «Տղամարդու վիզին փաթուած բարի կնոջ ձեռքերը՝ բախտին կողմէ տղամարդուն նետուած փրկութեան օղակներ կը համարուին»:

Ճերըմ Սեւինճըր

- «Ան որ սիրահարուած կին չէ տեսած, չի կրնար ըսել, թէ ինչ կը նշանակէ «կինը»»: Թեոֆէլ Կեոթ

- «Եթէ կինը չի յանձնուիր, կը յաղթէ, իսկ յանձնուելու պարագային՝ իր օրէնքները կը թելադրէ յաղթողին»:

Քարէլ Չապէլ

ԵՍ ՊԱՏՐԱՆՔԸ ՍԻՐԵՑԻ

Լեւոն Շանթ

Շուրջիս տափակ ու չոր կեանքէն զայրացկոտ, Կանչեցի ես իտալս կենսածին. Բայց ետեւէն կծու ծաղրով անամօթ «Է՛, ան միայն գրքի մէջն է» պոռագին. Ես ալ գիրքը ինծի ընկեր ընտրեցի, Ես պատրանքը սիրեցի:

Մենութեան մէջ լուռ, մթնշող սենեակիս՝ Զիրագործուող երազներու մէջ թաղուած՝ Հեռո՛ւ ու վե՛ր սաւառնեցաւ միշտ հոգիս, Հո՛ն, ուր կեանքիս գոհար յոյսերն են մաղուած. Ես, մօր մը պէս, անուրջներս գգուեցի, Ես պատրանքը սիրեցի:

Երբ գեղեցիկ թարմ աղջիկը ժպտեցաւ, Սիրտս դողաց յուզումով մը ներդաշնակ. Սիրեցի ալ, միայն ո՛չ ան, որ անցաւ. Այլ անոր նուրբ յափշտակիչ դէմքին տակ Նո՛ր էակ մը, որ մտքէս հոն անցուցի, Ես պատրանքը սիրեցի:

Հայրենիքի հուր կարօտը բնածին Երբ բռնկցուց յուզուած լանջս տենդօրէն, «Դուն հայրենիք, դուն հող չունիս» հծծեցին. Ես դառնացայ, բայց ալ ուժգին այդ օրէն Իմըս չեղող հայրենիքս պաշտեցի, Ես պատրանքը սիրեցի:

Ինծի համար այն ժամերը թանկ եղան, Երբ ներշնչուած ստեղծեցի միշտ անգոյ, Բայց անձնուրաց ազնիւ դէմքեր սիրեկան, Երբ իրական աշխարհին մէջ միշտ դժգոհ, Իտեալի կեանքէն երգել ուզեցի. Ես պատրանքը սիրեցի:





Ռաֆֆի Միլախեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՋԵՆ

- Սուրիոյ ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներու շրջագիծին մէջ, ՅՄԸՄ-ի ֆուտբոլի երիտասարդական խումբը 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Աֆրինը, իսկ տղոց առաջին խումբը 2-0 արդիւնքով գիշեցաւ Նէյրապին:



- Կիրակի առաւօտուն, Դամասկոս ժամանեցին Սուրիոյ ֆուտբոլի հաւաքականի նորանշանակ մարզիչ Նապիլ Մաալուլը եւ իր երկու օգնականները: Դամասկոսի միջազգային օդակայանին մէջ գիրեք դիմաւորեց Սուրիոյ ֆուտբոլի Դաշնութեան նախագահ Յաթեմ Դայեպը:

- Սուրիոյ ֆուտբոլի եւ պասքեթի դաշնութիւնները Կիրակի օր մէջ ամսուան տեւողութեամբ դադարեցուցին երկրին բոլոր մարզական մրցաշարքերը՝ պահպանելով ժամերէն (քորոնա) խուսափելու համար:

ՀԱՅԿԱԿԱՆ

ԼՈՅՍ ԱՆԵԱՐՅ ԵՎՈՒ ՀԵՆՐԻԿ ՄԻԻԹԱՐԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԶԱՄԱԿԸ

Անցեալ շաբթուան ընթացքին ծնաւ Հայաստանի հաւաքականի եւ Իտալիոյ Ռոմա ակումբի խաղացող Հենրիկ Միիթարեանի առաջին զամաւորը:



Սոյն լուրը առաջին անգամ յայտարարեց իտալական ակումբը՝ թուիթթորի իր էջով. «Ծնաւ Հենրիկ Միիթարեանի որդին՝ Համալէթը», գրուած էր ակումբի հրապարակած լրատուութեան մէջ: Նոյն օրը նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմեն Սարգսեան շնորհաւորեց հաւաքականի խաղացողը առջինեկ մանչի ծնունդին առիթով: Նախագահ Սարգսեան ինսթաքրամի իր էջին վրայ Միիթարեանին հետ լուսանկար մը հրապարակելով գրեց՝ «Աչքդ լոյս, սիրելի՛ Հենրիկ: Բարի գալուստ նոր աշխարհի, կրտսեր Համալէթ Միիթարեան, մեծ ֆուտբոլը քեզի կը սպասէ»:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԸՍՏ ԻՏԱԿԱՆ ԴԱՅԱՆՁՈՒՄԸ Ե ԻՎԵՆԹՈՒՄԻ ԿՈՂՄԵ

Ըստ իտալական Daily Mail-ին, Թուրքիոյ Իւվենթուսի ղեկավարութիւնը ընթացիկ մրցաշրջանի ավարտին ամեն գնով կը փորձէ պայմանագրութիւն կնքել Ռեալ Մատրիտի գլխաւոր մարզիչ Զինետին Զիտանի հետ: Իւվենթուս, որ դժգոհ է իւմբի գլխաւոր մարզիչ Մաուրիցիո Սարիի աշխատանքէն, Զիտանին կ'առաջարկէ 3 տարուան պայմանագրութիւն՝ տարեկան 8 միլիոն եւրօ աշխատավարձով: Արքիւրը կը յայտնէ, որ ֆրանսացի մաս-

նագետը պատրաստ է ընդունելու իտալական ակումբին առաջարկը, որովհետեւ անոր եւ Ռեալ Մատրիտի նախագահ Ֆլորենթինօ Փերեզին միջեւ յարաբերութիւնը լաւ ընթացքի մէջ չէ: Յիշենք, որ Զիտանին սպանական ակումբին հետ պայմանագրութիւնը կ'աւարտի 2022-ին:



Ըստ տարածուած տեղեկութիւններուն, Ռեալի վարչակազմը արդէն սկսած է աշխատանք տանիլ գտնելու Զիտանին փոխարինողը: Ան բանակցութիւններ սկսած է վարել Թորենհամի Նախկին մարզիչ Մաուրիցիօ Փոչետինոյի հետ:

ԷՏԵՆ ՀԱԶԱՐ ԿԸ ԴԱՐՄԱՆՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՋ

Սպանիոյ մայրաքաղաք Ռեալ Մատրիտի արքայական ակումբին մամուլի քարտուղարութիւնը յայտնեց, որ իւմբի պելճիքացի յարձակողական խաղացող Էտեն Հագարը Էտեն Հագար տաւ օրուան համար մեկնեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներ՝ ենթարկուելու համար վիրաբուժութեան:



Հագարին հետ մեկնեցան նաեւ Ռեալի ակումբի բժշկական կազմին ներկայացուցիչները, որոնք պիտի հսկեն անոր դարմանումին: Սպանիա վերադառնալէ ետք պիտի սկսի անոր ապաքինումը: Անելցնենք, որ սպանական ակումբը հսկայ գումար յատկացուցած էր պելճիքացի խաղացողը իւմբին միացնելու համար, բայց ան երկար ժամանակաշրջան մնաց դաշտերէն հեռու, վիրաւորուած ըլլալուն պատճառով, եւ իւմբին հետ մաս կազմեց միայն տաւը մրցումներու:

ՌՈՆԱԼՏՕ ԿԱՏԱՐԵՑ ԻՐ 1000-ՐԴ ՄՐՑՈՒՄԸ

Իտալիոյ Իւվենթուսի յարձակողական խաղացող Զրիստիանօ Ռոնալտօ Կիրակի երեկոյեան կատարեց իր մարզական կեանքին 1000-րդ մրցումը:

Ան խաղցաւ Իտալիոյ ախոյեանութեան 26-րդ փուլի Ինթըր Միլանի կազմին դէմ տեղի ունեցած մրցումին: Մարզական կեանքի ընթացքին ան նշանակած է 725 կոլ, որոնցմէ 99 կոլը եղած է Փորթուկալի հաւաքականին հետ կատարած 164 մրցումներուն ընթացքին: Ակումբային մակարդակով, 35 տարեկան մարզիկը հանդէս եկած է Սփորթինկի (31 խաղ, 5 կոլ), Մանչեսթըր Ինսայթըտի (292 խաղ, 118 կոլ), Ռեալ Մատրիտի (438 խաղ, 450 կոլ) եւ Իւվենթուսի հետ (75 խաղ, 53 կոլ):



ՈՒՐՖԱՅԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Սիրով Կը Հրաւիրէ Իր ԱՆԳԱՍՆԵՐՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՍՆԵՐԸ

ՃԱՆԿԵՐՈՅԹԻ
(ԾԱԿԿԱԶՁԱՐԴԻ ՏՕՆԻՆ ԱՌԻՌՈՎ)

Կիրակի, 5 Ապրիլ 2020-ի կէսօրուան ժամը 2:00-էն սկսեալ, Ա.Մ.Ժ.Տ-ն «Նի Սպիտակ» ճաշարանէն ներս:

Տոմսերը ապահովելու համար հեռաձայնել 0932757552 /0944 843984

Երկուշաբթի 16/3	Երեքշաբթի 17/3	Չորեքշաբթի 18/3	Հինգշաբթի 19/3	Ուրբաթ 20/3	Շաբթի 21/3	Կիրակի 22/3
10° 20°	9° 18°	7° 17°	7° 15°	7° 14°	7° 15°	8° 16°

